

**ԿՈՄՔԱՅՆՆԵՐԻ ԵՐԱՇԽԻՔԱՅԻՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ
ՈՒՂՈՒԹՅԱՄԲ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**

ք. Երևան

"25" սեպտեմբերի 2014թ.

"Հայաստանի ՓՄՁ ՋԱԿ" հիմնադրամը, այսուհետ՝ "Վաճառող", ի դեմս գործադիր տնօրեն Գեղամ Պետրոսյանի, ով գործում է Վաճառողի կանոնադրության հիման վրա, մի կողմից,

"ՓՄՁ ներդրումներ" ՈւՎԿ փակ բաժնետիրական ընկերությունը, այսուհետ՝ "Գնորդ/Վարձատու", ի դեմս գործադիր տնօրեն Արթուր Բադալյանի, ով գործում է Գնորդի կանոնադրության հիման վրա, մյուս կողմից,

և "Սպեցմաշ" սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը, այսուհետ՝ "Երաշխիքային սպասարկում իրականացնող անձ", ի դեմս տնօրեն Սերգեյ Բաբայանի, ով գործում է Երաշխիքային սպասարկում իրականացնող անձի կանոնադրության հիման վրա, երրորդ կողմից,

այսուհետ բոլոր կողմերը միասին՝ Կողմեր, կնքեցին սույն պայմանագիրը, այսուհետ՝ Պայմանագիր, հետևյալի մասին.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Կողմերի համագործակցությունը նպատակ ունի ապահովել գյուղացիական տնտեսություններին, կոոպերատիվներին, հեռավոր, սահմանամերձ, բարձրլեռնային համայնքների ՏԻՄ-երին, գյուղատնտեսական աշխատանքներում ներգրավված ՓՄՁ սուբյեկտներին և այլ իրավաբանական ու ֆիզիկական անձանց, այսուհետ՝ Վարձակալ, արտոնյալ պայմաններով ֆինանսական վարձակալության տրամադրված կոմբայնների, այսուհետ՝ Տեխնիկա, շահագործման հանձնման նպատակով անհրաժեշտ նախապատրաստական աշխատանքների և երաշխիքային սպասարկման իրականացումը:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Գնորդն իր կողմից նախապես մշակված կարգին ու Գնորդի և Վաճառողի միջև 2014թ-ի սեպտեմբերի 25-ին կնքված Կոմբայնների իրացման ուղղությամբ համագործակցության պայմանագրով սահմանված ընթացակարգին և պայմաններին համապատասխան Վարձակալներին ֆինանսական վարձակալության տրամադրելու նպատակով Վաճառողից գնում է վերջինիս և "ՌՈՍՍՍԵԼՄԱՇ" ԿՈՄՔԱՅՆՆԵՐԻ ԳՈՐԾԱՐԱՆ" սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միջև 2014թ-ի հունիսի 21-ին կնքված թիվ 40017842 պայմանագրի համաձայն ներկրված կոմբայններ՝ պայմանով, որ Վաճառողը հավաստում է գնվող կոմբայնների համար երաշխիքային սպասարկման առկայությունը, համաձայն Պայմանագրի 1.3 կետի, և ապահովում երաշխիքային սպասարկման իրականացումը Երաշխիքային սպասարկում իրականացնող անձի կողմից, իսկ վերջինս՝ իր և "ՌՈՍՍՍԵԼՄԱՇ" ԿՈՄՔԱՅՆՆԵՐԻ ԳՈՐԾԱՐԱՆ" սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միջև 2014թ-ի հունիսի 9-ին կնքված թիվ 40017744 պայմանագրի և "ՌՈՍՍՍԵԼՄԱՇ"

ԿՈՄԲԱՅՆՆԵՐԻ ԳՈՐԾԱՐԱՆ" սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2014թ-ի սեպտեմբերի 4-ի թիվ 101.Ճ-6/758 գրության համաձայն իրականացնում է կոմբայնների երաշխիքային սպասարկում:

1.2 Կողմերը հավաստում են, որ Տեխնիկան Վաճառողի կողմից ի պահ է հանձնվում Վարձակալին, իսկ Տեխնիկայի նկատմամբ Վարձակալի լիզինգի իրավունքը ֆինանսական վարձակալության (լիզինգի) պայմանագրի համաձայն ծագելուց հետո Վարձակալի, Վաճառողի և Գնորդ/Վարձատուի միջև կնքվում է համապատասխան ակտ, որի համաձայն Տեխնիկան տրամադրվում է Վարձակալին ֆինանսական վարձակալության նպատակով:

1.3 Համաձայն Վաճառողի և "ՌՈՍՍՍԵԼՄԱՇ" ԿՈՄԲԱՅՆՆԵՐԻ ԳՈՐԾԱՐԱՆ" սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միջև 2014թ-ի հուլիսի 21-ին կնքված թիվ 40017842 պայմանագրի՝ Տեխնիկան գտնվում է երաշխիքային սպասարկման մեջ այն շահագործման հանձնելուց հետո 24 ամսվա ընթացքում, սակայն ոչ ավելի քան 600 մոտոժամ "BEKTOP", "Нива", "Acros" և "TORUM" մակնիշի կոմբայնների համար և 1200 մոտոժամ "Дон-680" մակնիշի կոմբայնների համար (կախված այն հանգամանքից, թե որ ժամկետն է լրանում ավելի վաղ), այսուհետ՝ երաշխիքային սպասարկման ժամկետ: Երաշխիքային սպասարկման ժամկետը սկսվում է սույն Պայմանագրի 1.2 կետում նշված ակտի ստորագրման պահից:

1.4 Տեխնիկան Վարձակալին հանձնելիս Երաշխիքային սպասարկում իրականացնող անձի և Վարձակալի միջև ստորագրվում է Տեխնիկայի երաշխիքային սպասարկման իրականացման վերաբերյալ համապատասխան փաստաթուղթ, ինչպես նաև երաշխիքային սպասարկման ժամանակահատվածում տեխնիկայի ընթացիկ տեխնիկական սպասարկման պայմանագիր /եթե Տեխնիկայի ընթացիկ սպասարկումն իրականացվելու է Վարձակալի Երաշխիքային սպասարկում իրականացնող անձի կողմից/:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Գնորդն իրավունք ունի.

2.1.1 երաշխիքային ժամկետի ընթացքում Երաշխիքային սպասարկում իրականացնող անձին ներկայացնել Տեխնիկայի թերությունների վերացման պահանջներ,

2.1.2 Երաշխիքային սպասարկում իրականացնող անձի կողմից սպասարկումը ոչ պատշաճ իրականացնելու դեպքում դիմել Վաճառողին՝ պահանջելով ապահովել ողջամիտ ժամկետում Տեխնիկայի թերությունների վերացումը Երաշխիքային սպասարկում իրականացնող անձի կողմից, ինչպես նաև Վաճառողին ներկայացնել Գնորդի և Վաճառողի միջև 2014թ-ի սեպտեմբերի 25-ին կնքված Կոմբայնների իրացման ուղղությամբ համագործակցության պայմանագրով նախատեսված պահանջներ:

2.2. Գնորդը պարտավոր է Վարձակալին տեղեկացնել Տեխնիկան երաշխիքային սպասարկման մեջ գտնվելու և Գնորդին ու Երաշխիքային սպասարկում իրականացնող անձին դիմելու պայմանների մասին:

- 2.3. Վաճառողն իրավունք ունի Երաշխիքային սպասարկում իրականացնող անձից պահանջել պատշաճ իրականացնել Տեխնիկայի երաշխիքային սպասարկումը:
- 2.4. Վաճառողը պարտավոր է.
- 2.4.1 Գնորդին վաճառել պատշաճ որակի Տեխնիկա,
- 2.4.2 ապահովել Գնորդի և Վարձակալի կողմից Երաշխիքային սպասարկում իրականացնող անձին դիմելու, ինչպես նաև վերջինիս համապատասխան պահանջներ ներկայացնելու հնարավորությունը,
- 2.4.3 ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ Երաշխիքային սպասարկում իրականացնող անձի կողմից Տեխնիկայի երաշխիքային սպասարկման իրականացման ապահովման համար,
- 2.4.4 Երաշխիքային սպասարկում իրականացնող անձի կողմից երաշխիքային սպասարկումը ոչ պատշաճ իրականացնելու դեպքում Գնորդի պահանջով ապահովել Տեխնիկայի թերությունները վերացնելու ուղղությամբ կատարված ծախսերի հատուցումը կամ ապահովել գնված Տեխնիկայի փոխարինումը պատշաճ որակի Տեխնիկայով, եթե Տեխնիկայի թերությունները հնարավոր չէ վերացնել:
- 2.5. Երաշխիքային սպասարկում իրականացնող անձն իրավունք ունի.
- 2.5.1 երաշխիքային սպասարկման իրականացման նպատակով գննելու Տեխնիկան, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում կազմավորելու հանձնաժողով Տեխնիկայի թերությունների պատճառները բացահայտելու նպատակով,
- 2.5.2 չիրականացնել երաշխիքային սպասարկում ստորև նշված դեպքերում.
- 1) Վարձակալի կողմից թույլ է տրվել Տեխնիկայի շահագործման և պահպանման պայմանների խախտում, որը արձանագրվել է ուսումնասիրության նպատակով ստեղծված հանձնաժողովի կողմից, ընդ որում հանձնաժողովի կազմում պետք է ընդգրկվեն Գնորդի և Վաճառողի կողմից առնվազն մեկական ներկայացուցիչ,
 - 2) Վարձակալը առանց Գնորդի և Երաշխիքային սպասարկում իրականացնող անձի գրավոր համաձայնության կատարել է Տեխնիկայի կառուցվածքային փոփոխություն:
 - 3) Երաշխիքային սպասարկման ժամանակահատվածում տեխնիկայի ընթացիկ սպասարկումը իրականացվել է Երաշխիքային սպասարկում իրականացնող անձի կողմից չերաշխավորված մասնագետների կողմից:
- 2.6. Երաշխիքային սպասարկում իրականացնող անձը պարտավոր է.
- 2.6.1 իրականացնել Տեխնիկան շահագործման հանձնելու նպատակով անհրաժեշտ նախապատրաստական աշխատանքներ՝ ապահովելով Տեխնիկայի հանձնումը Վարձակալին պատշաճ վիճակում,
- 2.6.2 Տեխնիկան Վարձակալին հանձնելու ժամանակ ձևակերպել երաշխիքային սպասարկման իրականացման համար անհրաժեշտ համապատասխան փաստաթղթեր՝ Պայմանագրի 1.4 կետում նշված փաստաթուղթը /որի մեկ օրինակը տրամադրվում է Գնորդին/, Տեխնիկայի անձնագիրը, սպասարկման գրքույկը, երաշխիքային կտրոնը,

- 2.6.3 իրականացնել Տեխնիկայի երաշխիքային սպասարկումը՝ երաշխիքային սպասարկման ժամկետի ընթացքում,
- 2.6.4 ընթացք տալ Տեխնիկայի Վարձակալի կամ սեփականատիրոջ պահանջներին՝ երաշխիքային սպասարկման ժամկետի ընթացքում,
- 2.6.5 հնարավորինս սեղմ ժամկետում վերացնել Տեխնիկայի անսարքությունները և երաշխիքային կտրոնում կատարել երաշխիքային սպասարկման ժամկետի երկարաձգման վերաբերյալ նշում՝ Տեխնիկան վերանորոգման մեջ գտնվելու ժամանակահատվածով,
- 2.6.6 Վարձակալին տրամադրել խորհրդատվություն Տեխնիկայի շահագործման և տեխնիկական սպասարկման վերաբերյալ:
- 2.7. Երաշխիքային սպասարկումը չի տարածվում արագամաշ դետալների վրա, ինչպես նաև այն թերությունների վրա, որոնք առաջացել են կոմբայնի սխալ շահագործման արդյունքում կամ սխալ կամ ուշացված տեխնիկական սպասարկման արդյունքում: Երաշխիքային սպասարկան ենթակա հիմնական հանգույցներն ու դետալներն են՝

- Շարժիչ,
- Շարժիչի մեկնարկիչ,
- Տրանսմիսիա,
- Կամրջակներ,
- Հիդրավլիկա,
- Հնձիչը՝ բացի դանակներից,
- Շղոտացնցիչ,
- Կալսիչ,
- Զատման համակարգը:

Տեխնիկայի սեզոնային սպասարկումն իրականացվում է Վարձակալի հաշվին՝ Երաշխիքային սպասարկում իրականացնող անձի կողմից կամ վերջինիս հսկողությամբ:

3. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒՅԹՅՈՒՆԸ

3.1. Երաշխիքային սպասարկում իրականացնող անձը պատասխանատվություն է կրում Տեխնիկայի շահագործման հանձնման նպատակով անհրաժեշտ նախապատրաստական աշխատանքների և Պայմանագրով սահմանված կարգով երաշխիքային սպասարկման պատշաճ իրականացման համար:

3.2. Վաճառողը պատասխանատվություն է կրում Երաշխիքային սպասարկում իրականացնող անձի կողմից Տեխնիկայի երաշխիքային սպասարկման իրականացման ապահովման նպատակով անհրաժեշտ միջոցներ ձեռնարկելու համար, ինչպես նաև սուբսիդիար պատասխանատվություն է կրում Երաշխիքային սպասարկում իրականացնող անձի կողմից Տեխնիկայի երաշխիքային սպասարկման ոչ պատշաճ իրականացման համար:

4. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Սույն պայմանագրի հետ կապված վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով:

4.2 Առաջացած վեճերը բանակցությունների միջոցով չլուծվելու դեպքում լուծվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դատական կարգով:

5. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծարել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

6. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

6.1 Կողմերը պարտավորվում են աջակցել միմյանց սույն պայմանագրի կատարման ընթացքում:

6.2 Կողմերի միջև ամբողջ հաղորդագրությունը պետք է կատարվի գրավոր կարգով՝ առձեռն հանձման, փոստային առաքման և/կամ էլեկտրոնային հասցեին ուղարկելու միջոցով, իսկ սույն Պայմանագրով նախատեսված դեպքում՝ էլեկտրոնային հաղորդագրության կարգով:

6.3 Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի միակողմանիորեն դադարեցնել սույն պայմանագիրը, նախապես, սակայն ոչ ուշ քան 30 օրացուցային օր առաջ, գրավոր ծանուցելով մյուս կողմին: Պայմանագրի դադարեցումը չի ազատում Կողմերից որևէ մեկին մինչև դադարեցման պահը ստանձնած պարտավորություններից:

6.4 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում բոլոր կողմերի կողմից ստորագրման պահից և գործում է մինչև սույն պայմանագրով սահմանված փոխադարձ պարտավորությունների կատարման ավարտը:

6.5 Սույն պայմանագրով չկարգավորված բոլոր հարցերը կարգավորվում են բանակցությունների միջոցով և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

6.6 Սույն պայմանագրի բովանդակությունն ամբողջությամբ համապատասխանում է Կողմերի կամահայտնությանը:

6.7 Սույն պայմանագրի որևէ դրույթի անվավեր ճանաչվելու դեպքում, պայմանագրի մյուս դրույթները չեն կորցնում իրենց ուժը, եթե անվավեր ճանաչված դրույթի բացակայությունը անհնարին չի դարձնում սույն պայմանագրով սահմանված պարտականությունների և պարտավորությունների պատշաճ կատարումը, կամ եթե Կողմերը այլ բան գրավոր կերպով չեն պայմանավորվում:

6.8 Սույն պայմանագիրը կազմված և ստորագրված է երեք հավասար իրավաբանական ուժ ունեցող օրինակներից, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

6.9 Սույն պայմանագրի լրացումները և փոփոխությունները համարվում են օրինական, եթե վերջիններս բոլոր կողմերի կողմից համաձայնեցված են՝ մեկ փաստաթուղթ կազմելու միջոցով:

6.10 Կողմերը պարտավորվում են երկօրյա ժամկետում գրավոր ձևով միմյանց տեղեկացնել փոստային հասցեի, վճարային ռեկվիզիտների, հեռախոսի, ֆաքսի, այլ փոփոխությունների մասին, որոնք ապահովում են սույն պայմանագրով սահմանված դրույթների կատարումը:

7. ԿՈՂՄԵՐԻ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ՎԱՃԱՌՈՂ	ԳՆՈՐԴ/ՎԱՐՁԱՏՈՒ	ԵՐԱՇԽԻՔԱՅԻՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱՎԱՆԱՑՆՈՂ ԱՆՁ
"Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ" Հիմնադրամ	"ՓՄՁ ներդրումներ" ՈՒՎԿ ՓԲԸ	"Սպեցմաշ" ՍՊԸ
ք. Երևան, Մ. Մկրտչյան 5	ք. Երևան, Ա. Արմենակյան 2/5	գ. Շահումյան, 8 փող., 1 փկղ. /1 տ.
ՀՎՀՀ 02562459	ՀՎՀՀ 01567874	ՀՎՀՀ 06947049
"ՎՏԲ-Հայաստան Բանկ" ՓԲԸ h/h 16048102533800	"Զարգացման Հայկական Բանկ" ԲԲԸ h/h 1810003359330100	"ԱՄԵՐԻԱԲԱՆԿ" ՓԲԸ h/h 1570015359370100
էլ.հասցե՝ info@smednc.am	էլ.հասցե՝ info@smeinvest.am	էլ.հասցե՝ specmashlc@mail.ru
Գործադիր տնօրեն՝ Գ. Պետրոսյան	Գործադիր տնօրեն՝ Ա. Բաբայան	Տնօրեն՝ Ա. Բաբայան



Handwritten signatures in blue ink at the bottom of the page.